

## ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՆ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
(1-ին մաս)

Կոնվենցիայի կողմերը՝

հենվելով Մարդու շրջակա միջավայրի մասին Ստոկհոլմի հռչակագրի առաջին սկզբունքի վրա,

հենվելով նաեւ Ռիո դե Ժանեյրոյի Շրջակա միջավայրի եւ զարգացման մասին հռչակագրի 10-րդ սկզբունքի վրա,

հենվելով նաեւ Գլխավոր ասամբլեայի 1982 թվականի հոկտեմբերի 28-ի՝ Բնության համաշխարհային խարտիայի մասին թիվ 37/7 որոշման եւ 1990 թվականի դեկտեմբերի 14-ի՝ Մարդկանց բարեկեցության համար առողջ շրջակա միջավայր ապահովելու մասին թիվ 45/94-ի որոշման վրա,

հենվելով Շրջակա միջավայրի եւ առողջապահության մասին եվրոպական խարտիայի վրա, որն ընդունվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության 1989 թվականի դեկտեմբերի 8-ին Գերմանիայի Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքում կայացած "Շրջակա միջավայրը եւ առողջությունը" եվրոպական առաջին կոնֆերանսում,

հաստատելով շրջակա միջավայրի պաշտպանության եւ պահպանման, նրա դրության բարելավման եւ կայուն ու էկոլոգիապես առողջ զարգացման ապահովման անհրաժեշտությունը,

ընդունելով, որ շրջակա միջավայրի պատշաճ պաշտպանությունը անհրաժեշտ է մարդու բարեկեցությունը ապահովելու եւ մարդու հիմնական իրավունքների, ներառյալ՝ բուն կյանքի իրավունքի իրականացման համար,

ընդունելով նաեւ, որ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ապրել շրջակա միջավայրում, որը բարենպաստ է նրա առողջության եւ բարեկեցության համար, եւ որ նա պարտավոր է եւ՝ անձնապես, եւ՝ այլոց հետ համատեղ պաշտպանել ու բարելավել շրջակա միջավայրը՝ հոգուտ ներկա եւ գալիք սերունդների,

գտնելով, որ այս իրավունքի ապահովման եւ այս պարտականության կատարման համար քաղաքացիներին պետք է մատչելի լինի շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունը, որ նրանք պետք է իրավունք ունենան մասնակցելու որոշումների ընդունման գործընթացին, եւ արդարադատությունը պետք է շրջակա միջավայրի հետ կապված հարցերով մատչելի լինի, եւ ընդունելով, որ քաղաքացիներին իրենց իրավունքների իրականացման համար կարող է անհրաժեշտ լինել օգնություն,

ընդունելով, որ շրջակա միջավայրի հետ կապված հարցերում տեղեկության մատչելիության կատարելագործումը եւ հասարակության մասնակցությունը որոշումների ընդունմանը բարձրացնում է ընդունվող որոշումների որակը եւ նպաստում է դրանց իրագործմանը, նպաստում է հասարակության իրազեկության բարձրացմանը շրջակա միջավայրին առնչվող հիմնախնդիրների կապակցությամբ, թույլ է տալիս հասարակությանը արտահայտել իր մտահոգությունը եւ պետական մարմիններին՝ պատշաճ կերպով հաշվի առնել այդ մտահոգությունը,

ձգտելով, այսպիսով, նպաստել որոշումների ընդունման գործընթացի թափանցիկությանը եւ հրապարակայնությանը եւ հասարակության աջակցության ուժեղացմանը շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կապակցությամբ,

ընդունելով պետական կառավարման բոլոր ճյուղերի հրապարակայնության ցանկալիությունը եւ առաջարկելով օրենսդիր մարմիններին՝ իրագործել սույն Կոնվենցիայի սկզբունքներն իրենց աշխատանքում,

ընդունելով նաեւ, որ հասարակությունը պետք է տեղյակ լինի շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների ընդունման գործում մասնակցության ընթացակարգերի մասին,

ունենա ազատ մուտք դեպի այդ ընթացակարգերը եւ իրազեկ լինի, թե ինչ ձեւով է կարելի օգտվել դրանցից,

ընդունելով այնուհետեւ այն դերերի կարեւորությունը, որոնք համապատասխանաբար կարող են խաղալ առանձին քաղաքացիները, հասարակական կազմակերպությունները եւ մասնավոր սեկտորը շրջակա միջավայրի պաշտպանության գործում,

ցանկանալով աջակցել բնապահպանական կրթությանը՝ այն գործընթացների խորը ըմբռնման նպատակով, որոնք կապված են շրջակա միջավայրի եւ կայուն զարգացման հետ, խրախուսել հասարակության լայն իրազեկությունը եւ մասնակցությունը այն որոշումներին, որոնք ազդեցություն են գործում շրջակա միջավայրի եւ կայուն զարգացման վրա,

նշելով այս կապակցությամբ զանգվածային լրատվության միջոցների եւ կապի էլեկտրոնային կամ ապագա այլ միջոցների օգտագործման կարեւոր դերը,

ճանաչելով պետական որոշումներ ընդունելիս բնապահպանական նկատառումների ամբողջական ընդգրկման կարեւորությունը եւ դրանից բխող անհրաժեշտությունը առ այն, որ պետական մարմինները տիրապետեն ճշգրիտ, ընդգրկուն եւ նորագույն բնապահպանական տեղեկությանը,

ընդունելով, որ պետական մարմինները բնապահպանական տեղեկությանը տիրապետում են հանուն հասարակության շահերի,

համարելով, որ արդյունավետ դատաիրավական մեխանիզմները պետք է մատչելի լինեն հասարակությանը, ներառյալ կազմակերպությունները, հանուն վերջինիս օրինական շահերի պաշտպանության եւ օրենքի իրականացման,

նշելով սպառողներին արտադրանքի մասին պատշաճ տեղեկություն տրամադրելու անհրաժեշտությունը, որպեսզի ապահովվի շրջակա միջավայրի շահերի տեսանկյունից իրազեկ ընտրություն կատարելու հնարավորությունը,

ճանաչելով հասարակության մտահոգությունը՝ միտումնավոր կերպով գենետիկորեն փոփոխված օրգանիզմներին շրջակա միջավայր արձակելու վերաբերյալ եւ այն, որ կարիք կա ապահովելու հրապարակայնության բարձրացումը եւ հասարակության ավելի լայն ներգրավումը այս ոլորտում որոշումների ընդունման գործում,

համոզված լինելով, որ սույն Կոնվենցիայի իրագործումը կնպաստի ժողովրդավարության ամրապնդմանը Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) տարածաշրջանում,

գիտակցելով այն դերը, որը այս հարցերի կապակցությամբ խաղում է ԵՏՀ-ն, եւ հենվելով, ի թիվս այլոց, ԵՏՀ-ի՝ բնապահպանական տեղեկության մատչելիության եւ շրջակա միջավայրի պաշտպանության մասին որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության ապահովման մասին Ղեկավար սկզբունքների վրա, որոնք հաստատվել են 1995 թվականի հոկտեմբերի 25-ին Սոֆիայում /Բուլղարիա/ կայացած "Շրջակա միջավայր Եվրոպայի համար" նախարարների երրորդ կոնֆերանսի հռչակագրով,

նկատի ունենալով "Միջսահմանային կոնտեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին" 1991 թվականի փետրվարի 25-ին Էսպո քաղաքում /Ֆինլանդիա/ ստորագրված կոնվենցիայի, "Արտադրական վթարների միջսահմանային ներգործության մասին" կոնվենցիայի եւ "Միջսահմանային ջրահոսքերի եւ միջազգային լճերի պահպանության եւ օգտագործման մասին" 1992 թվականի մարտի 17-ին Յելսինկիում ստորագրված կոնվենցիայի, ինչպես նաեւ այլ տարածաշրջանային կոնվենցիաների համապատասխան դրույթները,

գիտակցելով, որ սույն Կոնվենցիայի ընդունումը կնպաստի "Շրջակա միջավայր Եվրոպայի համար" գործընթացի եւ Օրիոսում /Դանիա/ 1998 թվականի հունիսին կայացած նախարարների չորրորդ կոնֆերանսի արդյունքների հետագա ամրապնդմանը,

համաձայնեցին հետեւյալի մասին.

## ՅՈՒՐԱԿԱՆ 1. ՆՊԱՏԱԿԸ

Ներկայիս եւ ապագա սերունդների յուրաքանչյուր մարդու իրավունքի, ապրել շրջակա միջավայրում, որը բարենպաստ է նրա առողջության եւ բարեկեցության համար, պաշտպանությանը աջակցելու համար, Կողմերից յուրաքանչյուրը երաշխավորում է տեղեկության մատչելիության իրավունք, հասարակայնության՝ որոշումների ընդունման գործընթացի մասնակցության եւ արդարադատության մատչելիության իրավունք շրջակա միջավայրի հետ կապված հարցերով՝ սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

## ՅՈՒՐԱԿԱՆ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Կոնվենցիայի նպատակների համար՝

1. "Կողմ" նշանակում է, եթե տեքստը այլ բան չի նշում, սույն Կոնվենցիայի պայմանավորվող Կողմ,

2. "Պետական մարմին" նշանակում է՝

ա) ազգային, տարածաշրջանային եւ այլ մակարդակի կառավարություն,

բ) ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն իրականացնում է պետական վարչական գործառնություններ կամ ապահովում է պետական ծառայություններ իր ազգային օրենսդրությանը համապատասխան, ներառյալ կոնկրետ պարտականությունները, գործունեությունը կամ ծառայությունները, որոնք կապված են շրջակա միջավայրի հետ:

գ) ցանկացած այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն ունի պետական պարտականություններ կամ գործառնություններ կամ ապահովում է շրջակա միջավայրի հետ կապված ծառայություններ այն մարմնի կամ անձի վերահսկողության ներքո, որը վերը նշված է ա) կամ բ) ենթակետերում:

դ) տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի ցանկացած կազմակերպության հիմնարկություն, որը նշված է հոդված 17-ում, որը սույն Կոնվենցիայի Կողմ է:

Այս սահմանումը չի ներառում այն մարմինները կամ հիմնարկները, որոնք դատական կամ օրենսդիր դեր են կատարում:

3. "Բնապահպանական տեղեկություն" նշանակում է՝ գրավոր, տեսաձայնային, էլեկտրոնային կամ այլ նյութական ձեւով ցանկացած տեղեկություն հետեւյալի մասին՝

ա) շրջակա միջավայրի բաղադրիչների դրության մասին, ինչպիսիք են օդը եւ մթնոլորտը, ջուրը, գետինը, հողը, լանդշաֆտը եւ բնական օբյեկտները, կենսաբանական բազմազանությունը եւ նրա բաղադրիչները, ներառյալ՝ գենետիկորեն փոփոխված օրգանիզմները եւ փոխազդեցությունը այս բաղադրիչների միջեւ,

բ) այն ազդակների մասին, ինչպիսիք են՝ նյութերը, էներգիան, աղմուկը եւ ճառագայթումը, ինչպես նաեւ այն գործունեությունը կամ միջոցները, ներառյալ վարչական միջոցները, շրջակա միջավայրի վերաբերյալ համաձայնագրերը, քաղաքականությունը, օրենսդրությունը, պլանները եւ ծրագրերը, որոնք ազդում են կամ կարող են ազդել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա, որոնք նշված են վերեւի ա) ենթակետում, եւ ծախսերի եւ օգուտի ու այլ տնտեսական վերլուծությունները ու ենթադրությունները, որոնք օգտագործվում են շրջակա միջավայրին առնչվող հարցերով որոշումներ ընդունելու ժամանակ,

գ) մարդկանց առողջության եւ անվտանգության, մարդկանց կենսապայմանների, մշակույթի օբյեկտների եւ շենքերի ու շինությունների մասին՝ այն չափով, որ չափով նրանց վրա կարող է ազդել շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակը կամ, այս բաղադրիչների միջոցով, ազդակները, գործունեությունը կամ միջոցները, որոնք հիշատակված են վերեւի բ) ենթակետում:

4. "Հասարակություն" նշանակում է՝ մեկ կամ մեկից ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձ եւ նրանց ընկերությունները, կազմակերպությունները կամ խմբերը՝ համաձայն ազգային օրենսդրությանը կամ պրակտիկայի:

5. "Շահագրգիռ հասարակություն" նշանակում է՝ հասարակություն, որը ենթարկվում է ազդեցության կամ կարող է ենթարկվել ազդեցության որոշում ընդունելու գործընթացով, այն հարցերով, որոնք կապված են շրջակա միջավայրի հետ կամ որոնք շահագրգռվածություն ունեն այս գործընթացում, սույն սահմանման նպատակների համար հասարակական կազմակերպությունները, որոնք աջակցում են շրջակա միջավայրի պահպանությանը եւ համապատասխանում են ազգային օրենսդրության կողմից ներկայացվող բոլոր պահանջներին, համարվում են շահագրգիռ կազմակերպություններ:

### ՅՈՒՐԱՔԱՆՅՈՒՐ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Յուրաքանչյուր Կողմ կձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական, կանոնակարգող եւ այլ միջոցառումներ, ներառյալ այնպիսիք, որոնք նպատակաուղղված կլինեն սույն Կոնվենցիայով սահմանված տեղեկության իրագործման, հասարակայնության մասնակցության վերաբերյալ դրույթների եւ արդարադատության մատչելիության դրույթների համատեղելիությանը՝ սույն Կոնվենցիայի դրույթների իրագործման համար հստակ, թափանցիկ եւ հետեւողական կառույցի ստեղծման եւ օգտագործման նպատակով:

2. Յուրաքանչյուր Կողմ կձգտի ապահովել, որ պաշտոնատար անձինք եւ պետական մարմինները ցուցաբերեն աջակցություն եւ ղեկավարում հասարակությանը որոշումների ընդունման գործընթացին նրա մասնակցությունը հեշտացնելու, տեղեկություն ստանալու եւ արդարադատության մատչելիության գործում:

3. Յուրաքանչյուր Կողմ կաջակցի բնապահպանական հարցերի շուրջ հասարակության իրազեկության բարձրացմանը, հատկապես շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված տեղեկության մատչելիության, որոշումների ընդունմանը մասնակցության եւ արդարադատության մատչելիության հարցերով:

4. Յուրաքանչյուր Կողմ կապահովի բնապահպանությանն աջակցող ընկերությունների եւ խմբերի պատշաճ ճանաչումը եւ նրանց կտրամադրի համապատասխան օգնություն եւ կապահովի իր ազգային իրավական համակարգի համապատասխանությունն այս պարտավորությանը:

5. Սույն Կոնվենցիայի դրույթները չեն շոշափում որեւէ Կողմի իրավունքը՝ շարունակելու իրագործել կամ ձեռնարկել միջոցներ, որոնք ենթադրում են տեղեկության ավելի լայն մատչելիություն, հասարակության ավելի ակտիվ մասնակցություն որոշումների ընդունման գործընթացին եւ արդարադատության ավելի լայն մատչելիություն բնապահպանական հարցերով, քան դա նախատեսված է սույն Կոնվենցիայով:

6. Սույն Կոնվենցիան չի պահանջի գոյություն ունեցող իրավունքների որեւէ թուլացում, որոնք կապված են տեղեկության մատչելիության, հասարակության մասնակցությանը որոշումների ընդունման գործընթացին եւ արդարադատության մատչելիությանը՝ շրջակա միջավայրի պաշտպանության հարցերի կապակցությամբ:

7. Յուրաքանչյուր Կողմ կաջակցի սույն Կոնվենցիայի սկզբունքների կիրառմանը միջազգային բնապահպանական հարցերով որոշումների ընդունման գործընթացում եւ միջազգային կազմակերպությունների շրջանակներում շրջակա միջավայրին առնչվող հարցերում:

8. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան իրենց իրավունքներն իրականացնող անձինք իրենց գործունեության համար չենթարկվեն որեւէ ձեռով պատժի, հետապնդման կամ հալածանքի: Սույն դրույթը չի խթանում ազգային դատարանների լիազորությունը՝ որոշումներ կայացնել դատական ողջամիտ ծախսերի հատուցման համար, որոնք կապված են դատավարությունների հետ:

9. Սույն Կոնվենցիայի համապատասխան դրույթների սահմաններում հասարակությունն ունի մուտք դեպի տեղեկությունը, ունի որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու հնարավորություն եւ ունի ելք դեպի արդարադատությունը՝ շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված հարցերով, առանց խտրականության՝

ելնելով քաղաքացիության, ազգային պատկանելության կամ բնակության վայրի հատկանիշներից եւ, իրավաբանական անձանց դեպքում, առանց խտրականության՝ ելնելով գրանցման վայրի կամ գործունեության փաստացի վայրի չափանիշից:

#### ՀՈՂՎԱԾ 4. ԲՆԱԿԱՅԳՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

1. Յուրաքանչյուր կողմ ապահովում է, որ, սույն հոդվածի ներքոնշյալ կետերի համաձայն, ի պատասխան բնապահպանական տեղեկություն տրամադրելու խնդրանքի, պետական մարմինները ազգային օրենսդրության շրջանակներում հասարակությանը տրամադրեն այդ տեղեկությունը, ներառյալ՝ հայցի առկայության դեպքում եւ ստորեւ բերված բ) կետին համապատասխան, իրական փաստաթղթերի պատճենները, որոնք պարունակում են կամ իրենց մեջ ներառում են այդպիսի տեղեկությունը՝

ա) առանց անհրաժեշտության ձեւակերպել իր հետաքրքրությունը.

բ) պահանջված ձեւով, եթե միայն՝

i) պետական մարմինը հիմքեր չունի տրամադրել այն այլ ձեւով. այս դեպքում պետք է նշված լինեն այն պատճառները, որոնք արդարացնում են տեղեկության տրամադրումը տվյալ ձեւով, կամ

ii) տեղեկությունը հասարակությանը արդեն չի տրամադրվել այլ ձեւով:

2. Կետ 1-ում եւ ավելի վեր հիշատակվող բնապահպանական տեղեկությունը տրամադրվում է առավելագույնս սեղմ ժամանակամիջոցում, սակայն ոչ ուշ, քան խնդրանքի ներկայացման օրվանից մեկ ամսվա ընթացքում, եթե համապատասխան տեղեկության ծավալը եւ բարդությունը չի արդարացնում այդ ժամանակամիջոցի երկարացումը մինչեւ երկու ամիս՝ խնդրանքի ներկայացման օրվանից: Խնդրանքը ներկայացնողը տեղեկացվում է այդ ժամանակահատվածի ցանկացած երկարաձգման եւ այն պատճառների մասին, որոնք արդարացնում են այդպիսի որոշման ընդունումը:

3. Բնապահպանական տեղեկության տրամադրման խնդրանքը կարող է մերժվել, եթե.

ա) պետական մարմինը, որին ներկայացվել է խնդրանքը, չի տիրապետում պահանջվող բնապահպանական տեղեկությանը:

բ) խնդրանքը ակնհայտորեն չհիմնավորված է կամ ձեւակերպված է չափազանց ընդհանուր ձեւով, կամ

գ) խնդրանքը վերաբերում է այնպիսի նյութերի, որոնք գտնվում են ավարտման փուլում, կամ վերաբերում է պետական մարմինների ներքին գրագրությանը, երբ այդպիսի բացառումը նախատեսված է ազգային օրենսդրությամբ կամ հաստատված է գործնական փորձով՝ հաշվի առնելով հասարակության շահը այդ տեղեկության բացահայտմամբ:

4. Բնապահպանական տեղեկություն ստանալու խնդրանքը կարող է մերժվել, եթե դրա բացահայտումը բացասականորեն ազդում է՝

ա) պետական մարմինների աշխատանքի գաղտնիության վրա՝ այն դեպքերում, երբ այդպիսի գաղտնիությունը նախատեսված է ազգային օրենսդրությամբ,

բ) միջազգային հարաբերությունների, ազգային պաշտպանության կամ պետական անվտանգության վրա,

գ) արդարադատության իրականացման վրա, անձի արդարացի դատավարության արժանանալու հնարավորության վրա կամ պետական մարմինների կարողության վրա՝ անցկացնել քրեական կամ կարգապահական բնույթի հետաքննություն,

դ) առեւտրային եւ արդյունաբերական տեղեկության գաղտնիության վրա, այն դեպքերում, երբ այդ գաղտնիությունը պաշտպանվում է օրենքով՝ օրինական տնտեսական շահերի պաշտպանության նպատակով: Այս շրջանակներում բնապահպանությանը վերաբերող արտանետումների մասին տեղեկությունը ենթակա է բացահայտման,

ե) մտավոր սեփականության իրավունքի վրա,

զ) անձնական տվյալների եւ/կամ արխիվների գաղտնիության վրա, որոնք վերաբերում են ֆիզիկական անձանց, երբ անձը իր համաձայնությունը չի տվել

հասարակությանը այդպիսի տեղեկություն տրամադրելու մասին՝ ելնելով ազգային օրենսդրության դրույթներից:

Է) պահանջվող տեղեկությունը ներկայացնող երրորդ կողմի շահերի վրա, եթե այդ կողմը կապված չէ այդօրինակ վարվելու իրավական պարտականությամբ, կամ եթե այդ կողմի վրա չեն կարող դրվել այդպիսի պարտականություններ, եւ այն դեպքերում, երբ այդ կողմը համապատասխան տեղեկության հրապարակման համար համաձայնություն չի տվել, կամ

ը) այն շրջակա միջավայրի վրա, որին վերաբերում է տեղեկությունը, օրինակ՝ հազվագյուտ տեսակների բազմացման վայրերի վերաբերյալ:

Մերժման վերոհիշյալ հիմքերը մեկնաբանվում են սահմանափակ՝ հաշվի առնելով հասարակության շահագրգռվածությունը այդ տեղեկության հրապարակման մեջ, եւ այն, թե այդ տեղեկությունը կապված է արդյոք շրջակա միջավայր կատարվող արտանետումների հետ:

5. Այն դեպքերում, երբ պետական մարմինը չի տիրապետում պահանջվող բնապահպանական տեղեկությանը, այդ պետական մարմինը առավել սեղմ ժամկետներում տեղեկացնում է խնդրանքը ներկայացնողին այն պետական մարմնի մասին, որին, ըստ իրեն, կարելի է դիմել տեղեկություն տրամադրելու խնդրանքով, կամ հանձնում է այդ խնդրանքը տվյալ մարմնին եւ պատշաճ կերպով տեղյակ է պահում խնդրանքը ներկայացնողին:

6. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ այն դեպքերում, երբ տեղեկությունը, որը ենթակա չէ տրամադրման ըստ վերոհիշյալ 3 գ) եւ 4 կետերի, հնարավոր է առանձնացնել այլ տեղեկությունից, առանց վնասելու տրամադրման ոչ ենթակա տեղեկության գաղտնիությունը, պետական մարմինները տրամադրեն պահանջվող բնապահպանական տեղեկության մնացած մասը:

7. Եթե տեղեկության տրամադրման խնդրանքը ներկայացվել է գրավոր, կամ եթե խնդրանքը ներկայացնողը խնդրում է այդ մասին, ապա մերժումը նույնպես տրվում է գրավոր: Մերժման մեջ նշվում են դրա պատճառները եւ համապատասխան տեղեկություն որոշման ընդունման ընթացակարգի մատչելիության մասին՝ ըստ հոդված 9-ի: Տեղեկության տրամադրման խնդրանքի մերժումը տրվում է առավել սեղմ ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, եթե միայն տեղեկության բարդությունը չի արդարացնում այդ ժամկետի երկարացումը մինչեւ երկու ամիս՝ խնդրանքի ներկայացման պահից: Խնդրանքը ներկայացնողը տեղեկացվում է այդ ժամկետի ցանկացած երկարացման եւ դրա պատճառների մասին:

8. Յուրաքանչյուր Կողմ կարող է թույլատրել իր պետական մարմիններին՝ տեղեկության տրամադրման համար վարձ պահանջել՝ պայմանով, որ այդ վարձը չի գերազանցի ընդունելի չափը: Պետական մարմինները, որոնք մտադիր են տեղեկության տրամադրման համար վարձ պահանջել, խնդրանքը ներկայացնողներին հաղորդում են վարձի դրույքաչափերը, ըստ որոնց կատարվում է գանձումը, նշելով այն հանգամանքները, որոնք պահանջում են վարձավճարների գանձում կամ ազատում են նրանց վճարումից, ինչպես նաեւ այն դեպքերը, երբ տեղեկությունը տրամադրվում է այդպիսի վարձավճարի նախնական վճարման պայմանով:

## ՀՈՂՎԱԾ 5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱԾՈՒՄԸ

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ՝

ա) պետական մարմինները տիրապետեն եւ թարմացնեն բնապահպանական այն տեղեկությանը, որը կապված է նրանց գործառույթների հետ,

բ) պարտադիր համակարգեր ստեղծվեն՝ ապահովելու համար պատշաճ տեղեկության հոսքը դեպի պետական մարմիններ՝ ծրագրվող եւ իրագործվող այն միջոցառումների մասին, որոնք կարող են եական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա,

գ) մարդու առողջությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգի դեպքում,

որը առաջանում է որպես մարդու գործունեության հետեւանք կամ բնական պատճառների հետեւանքով, որը տեղեկությունը, որը կարող էր թույլ տալ հասարակությանը՝ միջոցներ ձեռնարկել վնասի հետեւանքների կանխման կամ մեղմացման համար, որը առաջանում է կապված այդպիսի սպառնալիքի հետ, եւ որին տիրապետում է պետական մարմինը, անմիջապես եւ անհապաղ տարածվել հասարակության այն անդամների միջեւ, որոնք հնարավոր է, որ տուժեն այդ սպառնալիքից:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ազգային օրենսդրության սահմաններում պետական մարմինների կողմից բնապահպանական տեղեկության տրամադրման ընթացակարգերը լինեն հասկանալի եւ բնապահպանական տեղեկությունը լինի դյուրամատչելի, բացի այլոց, հետեւյալ ճանապարհներով՝

ա) հասարակությանը տրամադրվում է բավարար տեղեկություն այն բնապահպանական տեղեկության տեսակների եւ նրանց ընդգրկման մասին, որոնք գտնվում են համապատասխան պետական մարմինների տրամադրության տակ, եւ այն հիմնական պայմանների մասին, որոնք որոշում են այդպիսի տեղեկության տրամադրման հնարավորությունը եւ նրա մատչելիությունը, ինչպես նաեւ դրա ստացման գործընթացի մասին,

բ) այնպիսի գործնական միջոցների կազմակերպում եւ իրագործում, ինչպիսիք են՝

i) ցուցակների, գրանցամատյանների կամ արխիվների մատչելիության ապահովում հասարակության համար.

ii) պարտականությունների սահմանում պաշտոնատար անձանց համար՝ աջակցություն ցուցաբերել հասարակությանը դեպի տեղեկություն մուտքեր գտնելու համար՝ համաձայն սույն Կոնվենցիայի, եւ

iii) կապի հանգույցների առանձնացում, եւ

գ) անվճար մուտքերի տրամադրում այն բնապահպանական տեղեկությանը, որը պարունակվում է ցուցակներում, գրանցամատյաններում կամ արխիվներում՝ համաձայն ենթակետ բ), i)-ի եւ վերը բերված կետերի:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է էլեկտրոնային տվյալների բազաներում բնապահպանական տեղեկության ծավալի աստիճանական ավելացումը, որը դյուրամատչելի է հասարակության համար կապի հանրային համակարգերի միջոցով: Այդօրինակ հանրամատչելի տեղեկությունը պետք է ընդգրկի՝

ա) զեկուցագրեր շրջակա միջավայրի վիճակի մասին, որոնք հիշատակվում են կետ 4-ում եւ ստորեւ բերված կետերում,

բ) բնապահպանությանը վերաբերող կամ դրա հետ կապված օրենսդրական ակտերի տեքստերը,

գ) համապատասխան դեպքերում՝ շրջակա միջավայրին վերաբերող քաղաքականության փաստաթղթեր, ծրագրեր եւ նախագծեր կամ դրա, ինչպես նաեւ բնապահպանական համաձայնագրեր, եւ

դ) այլ տեղեկություն՝ այն աստիճանով, որով նշված տեղեկության առկայությունը այդ ձեւով կդյուրացնի ազգային օրենսդրության կիրառումը սույն Կոնվենցիայի իրագործման համար՝ պայմանով, որ այդպիսի տեղեկությունը արդեն գոյություն ունի էլեկտրոնային ձեւով:

4. Յուրաքանչյուր Կողմ հավասար ժամանակահատվածներում, որոնք չեն գերազանցում երեք կամ չորս տարին, հրապարակում եւ տարածում է շրջակա միջավայրի վիճակի մասին ազգային զեկուցագիր, որը տեղեկություն է պարունակում շրջակա միջավայրի որակի մասին եւ տեղեկություն շրջակա միջավայրի ծանրաբեռնվածության մասին:

5. Յուրաքանչյուր Կողմ իր օրենսդրության սահմաններում միջոցներ է ձեռնարկում հետեւյալ տեղեկությունը տարածելու նպատակով, մասնավորապես՝

ա) օրենսդրական ակտեր եւ կարգավորող փաստաթղթեր, որպիսիք են՝ շրջակա միջավայրին վերաբերող ռազմավարությունները, քաղաքականությունները, ծրագրերը եւ գործողությունների պլանները, ինչպես նաեւ զեկուցագրեր դրանց իրագործման

ընթացքի մասին՝ պատրաստված պետական կառավարման տարբեր մակարդակներում,  
բ) միջազգային պայմանագրեր, կոնվենցիաներ եւ համաձայնագրեր՝ շրջակա  
միջավայրի հետ կապված հարցերով, եւ

գ) համապատասխան դեպքերում այլ միջազգային կարելուր փաստաթղթեր՝ շրջակա  
միջավայրի հետ կապված հարցերով:

6. Յուրաքանչյուր Կողմ խրախուսում է այն գործարարներին, որոնք  
գործունեությունը էական ներգործություն ունի շրջակա միջավայրի վրա, կանոնավոր  
կերպով հասարակությանը տեղեկացնում է իր գործողությունների եւ  
արտադրատեսակների՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության մասին,  
համապատասխան դեպքերում կամավոր էկոպիտակման համակարգերի օգտագործման կամ  
բնապահպանական փորձաքննությանը եւ կամ այլ միջոցների:

7. Յուրաքանչյուր Կողմ՝

ա) հրապարակում է շրջակա միջավայրին վերաբերող տեղեկություն եւ դրա  
վերլուծությունը, որոնք համարում է պատեհ եւ կարելուր բնապահպանական  
քաղաքականության հարցերի առավել էական առաջարկությունների մշակման համար,

բ) հրապարակում կամ այլ ձեւով ապահովում է առկա բացատրական նյութերի  
մատչելիությունը հասարակությանն առնչվող իր կապերի մասին՝ այն հարցերով, որոնք  
մտնում են սույն Կոնվենցիայի գործունեության ոլորտի մեջ, եւ

գ) տրամադրում է պատշաճ ձեւով տեղեկություն պետական մարմինների կողմից  
բոլոր մակարդակներով հասարակական գործունեության իրագործման կամ բնակչությանը  
ծառայությունների մատուցման մասին, որոնք կապված են շրջակա միջավայրի հետ:

8. Յուրաքանչյուր Կողմ մշակում է մեխանիզմներ՝ հասարակությանը  
արտադրատեսակների մասին բավարար տեղեկություն տրամադրելու նպատակով, այն  
ձեւով, որը հնարավորություն տա սպառողներին կատարել հիմնավորված ընտրություն՝  
հաշվի առնելով շրջակա միջավայրի շահերը:

9. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է միջոցներ՝ համապատասխան դեպքերում  
հաշվի առնելով միջազգային գործընթացները, փոխհամաձայնեցված աղտոտման  
կադաստրների կամ ռեգիստրների ազգային համակարգի աստիճանական տարածման համար՝  
օգտագործելով կանոնավորված, կոմպյուտերացված եւ հանրամատչելի տվյալների բազայի  
վրա, որը կազմվում է հաշվետվության ստանդարտացված ձեւերի հիման վրա: Այդպիսի  
համակարգը կարող է իր մեջ ներառել տվյալներ նյութերի եւ արտադրանքի որոշակի  
շարքի մուտքի, ելքի եւ շարժի մասին, ներառյալ ջրի, էներգիայի եւ ռեսուրսների  
օգտագործման մասին, գործունեության կոնկրետ տեսակներից դեպի շրջակա միջավայր,  
ինչպես նաեւ դեպի օբյեկտների սահմաններում կամ դրանցից դուրս գտնվող մշակման  
եւ հեռացման վայրեր:

10. Սույն հոդվածում ոչ մի բան չի կարող վնասել Կողմերի իրավունքը՝ մերժել  
որոշակի բնապահպանական տեղեկության տրամադրումը՝ հոդված 4-ի կետ 3-ի եւ 4-ի  
դրույթներին համապատասխան.

## ՀՈՂՎԱԾ 6. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՆԿՐԵՏ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՆ

1. Յուրաքանչյուր Կողմ՝

ա) կիրառում է սույն հոդվածի դրույթները այն հարցերի լուծման  
կապակցությամբ, որոնք առնչվում են հավելված 1-ում նշված գործունեության  
թույլտվության հետ

բ) իր ազգային օրենսդրությանը համապատասխան, նմանապես կիրառում է սույն  
հոդվածի դրույթները այն որոշումների հանդեպ, որոնք առնչվում են հավելված 1-ում  
չհիշատակված այնպիսի նախատեսվող գործունեությունը թույլատրելուն, որը կարող է  
էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա: Այդ նպատակով Կողմերը  
որոշում են, թե արդյոք այդ դրույթներն ընդգրկում են նախատեսվող



գործունեությունը, եւ

գ) կարող է, եթե դա նախատեսված է ազգային օրենսդրությամբ, ամեն կոնկրետ դեպքում որոշում ընդունել չկիրառելու սույն հոդվածի դրույթները այն նախատեսվող գործունեության նկատմամբ, որը ծառայում է ազգային պաշտպանության շահերին, եթե այդ Կողմը գտնում է, որ այդպիսի կիրառումը կարող է բացասական ազդեցություն թողնել այդ շահերի վրա:

2. Շահագրգիռ հասարակությունը պատշաճորեն, ժամանակին եւ արդյունավետ ձեւով տեղեկացվում է, կախված հանգամանքներից, կամ հրապարակային ծանուցման կամ անհատական կարգով որոշման ընդունման գործընթացի առաջին փուլում այն հարցերով, որոնք կապված են շրջակա միջավայրի հետ, ի թիվս այլոց, հետեւյալի մասին՝

ա) նախատեսվող գործունեության տեսակի մասին եւ այն հայցի մասին, որի վերաբերյալ պետք է ընդունվի որոշումը,

բ) հնարավոր որոշումների բնույթի կամ որոշման նախագծի մասին,

գ) այն պետական մարմնի մասին, որը պատասխանատու է որոշում ընդունելու համար,

դ) նախատեսվող ընթացակարգի մասին, ներառյալ այն, թե ինչ ձեւով եւ երբ է կարող տրամադրվել տեղեկությունը,

i) ընթացակարգի իրականացման սկզբի մասին,

ii) հասարակության մասնակցության հնարավորությունների մասին,

iii) ցանկացած նախատեսվող հասարակական լսման ժամանակի եւ տեղի մասին,

iv) այն պետական մարմնի մատնանշման մասին, որից կարելի է ստանալ համապատասխան տեղեկությունը, եւ այն մասին, թե ուր է տեղափոխվել համապատասխան տեղեկությունը՝ հասարակության կողմից համար,

v) համապատասխան պետական մարմնի կամ ցանկացած այլ պաշտոնական մարմնի առկայության մասին, որին կարող են ներկայացվել դիտողությունները կամ հարցերը, եւ դիտողությունների կամ հարցերի ներկայացման ժամանակացույցի մասին, եւ

vi) այն բանի մասին, թե նախատեսվող գործունեության առնչությամբ ինչ բնապահպանական տեղեկություն է առկա,

ե) այն փաստի մասին, որ տվյալ գործունեությունը ընդգրկված է շրջակա միջավայրի վրա ունեցող ազդեցության ազգային կամ անդրասահմանային գնահատման ընթացակարգի մեջ:

3. Հասարակության մասնակցության ընթացակարգերը նախատեսում են զանազան փուլերի իրագործման ընդունելի ժամկետներ, որոնք ապահովում են բավարար ժամանակ վերոհիշյալ 2-րդ կետի համաձայն բնապահպանական հարցերի կապակցությամբ հասարակության տեղեկացման եւ որոշումներ կայացնելու գործընթացին հասարակության նախապատրաստման ու արդյունավետ մասնակցության համար:

4. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է հասարակության մասնակցությունը ամենավաղ փուլում, երբ բաց են բոլոր հնարավորությունները զանազան տարբերակների դիտարկման համար, եւ երբ կարելի է ապահովել հասարակության արդյունավետ մասնակցությունը:

5. Յուրաքանչյուր Կողմ պետք է, անհրաժեշտ դեպքերում, խրախուսի պոտենցիալ դիմողներին, նախքան թույլտվություն ստանալու հայտ ներկայացնելը որոշի շահագրգիռ հասարակության խավերը, անցկացնի քննարկումներ եւ տեղեկություն ներկայացնի հայտի նպատակների մասին:

6. Հարցում ստանալու դեպքում յուրաքանչյուր Կողմ կպահանջի իրավասու մարմիններից ապահովել, որտեղ պահանջվում է ազգային օրենսդրությամբ, հասարակության շահագրգիռ խավերի համար այն տեղեկության մատչելիությունը, որը կապված է այս հոդվածում նշված որոշումներ կայացնելու գործընթացի հետ եւ մատչելի է հասարակության մասնակցության ընթացակարգի պահին՝ առանց վտանգելու Կողմերի այն իրավունքը, որը վերաբերում է հոդված 4-ի 3 եւ 4 կետերում նշված որոշ տեղեկության բացահայտման մերժմանը:

ա) արդյունաբերական օբյեկտի եւ առաջարկվող գործունեության ֆիզիկական եւ տեխնիկական բնութագրերի նկարագրությունը, ներառյալ ենթադրվող թափոնների եւ արտանետումների մոտավոր հաշվարկը,

բ) շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության զգալի ազդեցության նկարագրությունը,

գ) այն միջոցառումների նկարագրությունը, որոնք նախատեսված են ազդեցության, ներառյալ՝ արտանետումների, կանխարգելման եւ/կամ նվազեցման համար,

դ) վերոհիշյալի ոչ տեխնիկական ամփոփումը,

ե) հիմնական այլընտրանքների ուրվագիծը, որոնք դիտարկվել են հայտը ներկայացնողի կողմից, եւ

զ) հիմնական հաշվետվությունները եւ խորհուրդները, որոնք, ազգային օրենսդրությանը համապատասխան, ուղղվում են պետական մարմնին այն ժամանակ, երբ շահագրգիռ հասարակությանը ներկայացվելու է տեղեկություն՝ համաձայն վերը բերված կետ 2-ի:

7. Հասարակայնության մասնակցության ընթացակարգերը նրան թույլատրում են ներկայացնել գրավոր ձեւով կամ, անհրաժեշտ դեպքերում, հայտը ներկայացնողի մասնակցությամբ տեղի ունեցող հասարակական լսումների կամ հարցի քննարկման ժամանակ ցանկացած դիտողություններ, տեղեկություն, վերլուծություններ կամ կարծիքներ, որոնք նրա կարծիքով առնչվում են նախատեսվող գործունեությանը:

8. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ համապատասխան որոշման մեջ պատշաճ ձեւով արտացոլված լինեն հասարակության մասնակցության արդյունքները:

9. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ պետական մարմնի կողմից որոշում ընդունելուց հետո հասարակությունը անմիջապես տեղեկացվի այդ որոշման մասին՝ ըստ համապատասխան ընթացակարգերի: Յուրաքանչյուր Կողմ հասարակությանը կներկայացնի իր որոշման տեքստը՝ նշելով այն պատճառները եւ նկատառումները, որոնք դրված են որոշման հիմքում:

10. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ պետական մարմնի կողմից այն գործունեության իրագործման պայմանների վերանայման կամ նորացման դեպքում, որի մասին խոսվում է կետ 1-ում, հիշատակված պայմանների վերանայման կամ նորոգման դեպքում սույն հոդվածի 2-9 կետերի դրույթները կիրառվեն *mutatis mutandis*, ինչպես նաեւ այն դեպքերում, երբ այդ նպատակահարմար է:

11. Յուրաքանչյուր Կողմ, իր ազգային օրենսդրության շրջանակներում, հնարավորին չափ համապատասխան ձեւով կիրառում է սույն հոդվածի դրույթները այն որոշումների նկատմամբ, որոնք առնչվում են գենետիկորեն փոփոխված օրգանիզմների կանխամտածված ազատ արձակելու թույլտվություններին:

#### **ՀՈՂՎԱԾ 7. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԳՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻՆ, ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ԵՎ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՄԱՆԸ**

Յուրաքանչյուր Կողմ նախատեսում է համապատասխան գործնական եւ/կամ այլ դրույթներ, որոնք վերաբերում են թափանցիկ եւ արդարացի կառույցի սահմաններում հասարակության մասնակցությանը շրջակա միջավայրի հետ կապված պլանների եւ ծրագրերի նախապատրաստման գործընթացին՝ հասարակությանը անհրաժեշտ տեղեկություն տրամադրելով: Այս շրջանակներում կիրառվում են հոդված 6-ի 3, 4 եւ 8 կետերը: Համապատասխան պետական մարմինը, հաշվի առնելով սույն Կոնվենցիայի նպատակները, որոշում է հասարակության այն խավերը, որոնք կարող են մասնակցել այս գործընթացին: Ըստ հնարավորության, յուրաքանչյուր Կողմը ճիգեր է գործադրում՝ ապահովելու համար հասարակության մասնակցությունը շրջակա միջավայրի հետ կապված քաղաքականության մշակման գործին:

**ՀՈՂՎԱԾ 8. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒԺ ՈՒՆԵՑՈՂ ՆՈՐՄԱՏԻՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ/ՎԱՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԻՐԱՌՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱՎԱԿԱՆՈՐԵՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Յուրաքանչյուր Կողմ ճիգեր է գործադրում՝ աջակցելու համար հասարակության արդյունավետ մասնակցությանը պետական մարմինների կողմից անմիջական կիրառման ուժ ունեցող նորմատիվ դրույթների եւ այլ ընդհանուր կիրառում ունեցող իրավականորեն պարտադիր նորմատիվ ակտերի, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, նախապատրաստման գործում համապատասխան փուլի ընթացքում, երբ դեռեւս բաց է ընտրության հնարավորությունը: Այդ նպատակով ձեռնարկվում են հետեւյալ միջոցները՝

ա) սահմանվում են ժամկետներ, որոնք բավարար են արդյունավետ

մասնակցությունը ապահովելու համար,

բ) կանոնների նախագծերը հրապարակվում են կամ այլ ձեւով տրամադրվում են հասարակությանը, եւ

գ) հասարակությանը հնարավորություն է ընձեռնվում ներկայացնել իր դիտողությունները անմիջականորեն կամ ներկայացուցչական խորհրդակցական մարմինների միջոցով:

Հասարակության մասնակցության արդյունքները հաշվի են առնվում առավելագույնս հնարավոր չափով:

**ՀՈՂՎԱԾ 9. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ**

1. Յուրաքանչյուր Կողմ իր ազգային օրենսդրության շրջանակներում ապահովում է, որ յուրաքանչյուր անձ, որը համարում է, որ հողված 4-ի պայմանների համապատասխան տրված տեղեկություն ստանալու իր խնդրանքն անտեսվել է կամ ապօրինի մերժվել, լինի դա մասամբ, թե ամբողջությամբ, չի բավարարվել պատշաճ ձեւով, կամ եթե մի այլ առնչությամբ այդ խնդրանքի նկատմամբ ցուցաբերվել է մոտեցում, որը չի համապատասխանում նշված հողվածի դրույթներին, մուտք ունենա քննության ընթացակարգին դատարանում կամ օրենքի համաձայն հիմնված մեկ այլ անկախ եւ անկողմնակալ մարմնում: Այն դեպքերում, երբ նախատեսվում է որոշման այդպիսի քննություն դատարանում, Կողմը ապահովում է, որ այդ անձը մուտք ունենա նաեւ դեպի օրենքով սահմանված արագ ընթացակարգ, որը չի պահանջում կամ պահանջում է նվազագույն վարձատրություն՝ դատարան չհանդիսացող պետական մարմնի կամ անկախ ու անաչառ մարմնի կողմից վերաքննության համար: 1-ին կետին համապատասխան ընդունվող վերջնական որոշումները պարտադիր բնույթ են կրում տեղեկությանը տիրապետող մարմնի համար: Պատճառները ներկայացվում են գրավոր ձեւով, առնվազն այն դեպքերում, երբ տեղեկություն տրամադրելու խնդրանքը մերժվում է սույն կետին համապատասխան:

2. Յուրաքանչյուր Կողմ իր ազգային օրենսդրության շրջանակներում ապահովում է, որ հասարակության համապատասխան ներկայացուցիչները, որոնք՝

ա) ունեն բավականին շահագրգռվածություն կամ որպես այլընտրանքային տարբերակ,

բ) համարում են, որ տեղի է ունեցել այս կամ այն իրավունքի խախտում, եթե դա պահանջվում է համապատասխան Կողմի վարչական ընթացակարգային նորմերով,

մուտք ունենան դեպի դիտարկման ընթացակարգը դատարանում եւ/կամ օրենքի համաձայն հիմնված մեկ այլ անկախ եւ անաչառ մարմնում ընդունված ցանկացած որոշման, գործողության կամ անգործության օրինականությունը իրավական եւ ընթացակարգային տեսակետից վիճարկելու նպատակով, հողված 6-ի դրույթների եւ սույն Կոնվենցիայի այլ համապատասխան դրույթների պահպանման պայմանով եւ այնտեղ որտեղ դա նախատեսված է ազգային օրենքներին համապատասխան եւ առանց վտանգելու

ստորեւ բերված կետ 3-ը:

Բավարար շահագրգռության առկայությունը եւ այս կամ այն իրավունքի խախտումը որոշվում է՝ ելնելով ազգային օրենսդրության դրույթներից եւ շահագրգիռ հասարակությանը դեպի արդարադատություն, սույն Կոնվենցիայի շրջանակներում, լայն մուտք տրամադրելու նպատակից: Այս նպատակով վերը բերված ենթակետ ա)-ի նպատակների համար բավարար է ցանկացած հասարակական կազմակերպության, որը համապատասխանում է հոդված 2-ի կետ 5-ում նշված պահանջներին, շահագրգռվածությունը: Այդպիսի կազմակերպությունը կարող է նմանապես իրավունք ունենալ հայտարարել իր իրավունքների խախտման մասին՝ ըստ վերոհիշյալ բ) կետի:

Սույն կետ 2-ի դրույթները չեն բացառում վարչական մարմնում նախնական դիտարկման ընթացակարգի հնարավորությունը եւ չեն առնչվում վարչական ընթացակարգերի սպառման հետ, նախքան դատական ընթացակարգերին անցնելը, այն դեպքերում, երբ այդպիսի պահանջը նախատեսված է ազգային օրենսդրությամբ:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, վերը բերված կետ 1-ում եւ 2-ում հիշատակված դիտարկման ընթացակարգերից բացի եւ առանց դրանք խախտելու, որ հասարակության այն ներկայացուցիչները, որոնք համապատասխանում են ազգային օրենսդրության մեջ բերված չափանիշներին, եթե այդպիսիք գոյություն ունենան, մուտք դեպի վարչական կամ դատական ընթացակարգերը՝ վիճարկելու մասնավոր անձանց կամ պետական մարմինների այն գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են շրջակա միջավայրին առնչվող ազգային օրենսդրության դրույթները:

4. Պետք է, որ առանց վնասի վերելում բերված կետ 1-ի համար, կետեր 1-ում, 2-ում եւ 3-ում բերված ընթացակարգերը ապահովեն իրավական պաշտպանության պատշաճ եւ արդյունավետ միջոցներ, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, դատական արգելանքի տեսքով, եւ լինեն արդարացի, անաչառ, ժամանակին եւ կապված չլինեն անմատչելի բարձր ծախսերի հետ: Սույն հոդվածին համապատասխան ընդունվող որոշումներն ընդունվում կամ արձանագրվում են գրավոր ձեւով: Հասարակությանը մատչելի են դատարանի որոշումները եւ, հնարավորության դեպքում, այլ մարմինների որոշումները:

5. Սույն հոդվածի դրույթների արդյունավետության բարձրացման համար յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ հասարակությանը տրամադրվի տեղեկություն որոշումների դիտարկման վարչական եւ դատական ընթացակարգերի մատչելիության մասին, եւ դիտարկում է համապատասխան մեխանիզմների ստեղծման հարցը, որոնք օգնություն կտրամադրեն արդարադատության մատչելիության ֆինանսական կամ այլ խոչընդոտների վերացման կամ նվազեցման համար:

## ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ 10. ԿՈՂՄԵՐԻ ԺՈՂՈՎԸ

1. Կողմերի առաջին ժողովը իրավիքվում է ոչ ուշ, քան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարի հետո: Հետագայում, Կողմերի հերթական ժողովները անցկացվում են առնվազն յուրաքանչյուր երկու տարին մեկ, եթե Կողմերը այլ որոշում չեն ընդունում կամ ցանկացած Կողմի գրավոր խնդրանքով, պայմանով, որ այդ խնդրանքի մասին Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի գործադիր քարտուղարի կողմից բոլոր Կողմերին իրազեկ պահելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում այն կպաշտպանվի Կողմերի ոչ պակաս, քան մեկ երրորդի կողմից:

2. Իրենց ժողովների ժամանակ Կողմերը մշտապես վերահսկում են սույն Կոնվենցիայի իրականացման ընթացքը այն տեղեկության հիման վրա, որը կանոնավոր ձեւով ստացվում է Կողմերից, եւ այդ նպատակով՝

ա) իրագործում են շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող տեղեկության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության եւ արդարադատության մատչելիությանը վերաբերող քաղաքականության եւ իրավական ու մեթոդաբանական մոտեցումների վերլուծությունը՝ նպատակ ունենալով

դրանց հետագա կատարելագործումը,

բ) փոխանակում են տեղեկություն, որն առնչվում է այն փորձին, որը ձեռք է բերվել երկկողմանի կամ բազմակողմանի համաձայնագրերի կամ այլ պայմանավորվածությունների կնքման եւ իրականացման ոլորտում, որոնք առնչվում են սույն Կոնվենցիայի նպատակներին, եւ որոնց մասնակիցները սույն Կոնվենցիայի մեկ կամ մեկից ավելի Կողմեր են,

գ) անհրաժեշտության դեպքում դիմում են ԵՏՀ-ի համապատասխան մարմիններին, ինչպես նաեւ այլ իրավասու միջազգային մարմիններին եւ հատուկ կոմիտեներին այն բոլոր տեսանկյունների դիտարկման համար, որոնք կապված են սույն Կոնվենցիայի նպատակներին հասնելու հետ,

դ) անհրաժեշտության դեպքում հիմնադրում են ցանկացած օժանդակ մարմիններ,

ե) համապատասխան դեպքերում մշակում են արձանագրություններ սույն

Կոնվենցիայի համար,

զ) դիտարկում եւ հաստատում են առաջարկություններ սույն Կոնվենցիայի մեջ ուղղումներ մտցնելու մասին՝ հոդված 14-ի դրույթներին համապատասխան,

է) դիտարկում եւ ընդունում են ցանկացած հավելյալ միջոցառումներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն Կոնվենցիայի նպատակներին հասնելու համար,

ը) իրենց առաջին ժողովի ընթացքում դիտարկում եւ միաձայնության պայմանով ընդունում են իրենց եւ օժանդակ մարմինների ժողովների կանոնները եւ ընթացակարգերը,

թ) իրենց առաջին ժողովի ընթացքում դիտարկում են հոդված 5-ի կետ 9-ի դրույթների իրագործման իրենց կողմից կուտակված փորձը եւ որոշում են այն հարցը, թե ինչ քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել սույն կետում նշված համակարգի հետագա զարգացման համար՝ հաշվի առնելով միջազգային մակարդակով տեղի ունեցող գործընթացները եւ փոփոխությունները, ներառյալ համապատասխան փաստաթղթի մշակումը, որը կապված է շրջակա միջավայր մտնող աղտոտությունների փոխանցման մեխանիզմների կամ գույքի հետ, որոնք կարող էին մտցվել սույն Կոնվենցիայի հավելվածների մեջ:

3. Կողմերի ժողովը կարող է, անհրաժեշտության դեպքում, դիտարկել ֆինանսական դրույթների հաստատումը՝ միաձայնության սկզբունքի հիման վրա:

4. Միավորված ազգերի կազմակերպությունը, նրա մասնագիտացված հաստատությունները եւ Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը, ինչպես նաեւ ցանկացած պետություն կամ տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպություն, որոնք իրավունք ունեն, հոդված 17-ին համապատասխան, ստորագրել սույն Կոնվենցիան, սակայն չեն հանդիսանում սույն Կոնվենցիայի Կողմ, եւ ցանկացած միջկառավարական կազմակերպություն, որը իրազեկ է այն ոլորտներին, որոնց առնչվում է սույն Կոնվենցիան, իրավունք ունեն մասնակցել Կողմերի ժողովներին որպես դիտորդ:

5. Ցանկացած հասարակական կազմակերպություն, որն իրազեկ է այն ոլորտներին, որոնց առնչվում է սույն Կոնվենցիան, եւ որը տեղեկացրել է Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի գործադիր քարտուղարին իր ցանկության մասին՝ ներկա լինել Կողմերի ժողովին, ունի այդպիսի մասնակցության իրավունք որպես դիտորդ, եթե դրա դեմ չի առարկում ժողովին ներկա կողմերի առնվազն մեկ երրորդը:

6. Վերը նշված կետ 4-ի եւ 5-ի նպատակների համար, վերը բերված կետ 2-ի հ)-ում հիշված ընթացակարգերը նախատեսում են գործնական մեխանիզմներ, որոնք կապված են մասնակցության թույլտվության ընթացակարգի եւ այլ համապատասխան պայմանների հետ:

## ՅՈՒՐԱԾ 11. ՁԱՅՆԻ ԻՐԱՎՈՒՆԸ

1. Բացառությամբ ստորեւ բերված կետ 2-ով նախատեսված դեպքերի, սույն

Կոնվենցիայի յուրաքանչյուր Կողմ ունի մեկ ձայն:

2. Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունները իրենց ձայնի իրավունքը իրականացնում են այն հարցերով, որոնք գտնվում են իրենց իրավասության ոլորտում՝ ելնելով այն ձայների թվից, որը հավասար է իրենց անդամ-պետությունների քանակին, որոնք սույն Կոնվենցիայի Կողմ են հանդիսանում: Այսպիսի կազմակերպությունները կորցնում են իրենց ձայնի իրավունքը, եթե իրենց անդամ պետությունները օգտվում են իրենց ձայնի իրավունքից եւ՝ ընդհակառակը:

## ՅՈՒՐԱԿՐԱՆՆԵՐԸ 12. ԶԱՐԿԱՎՈՒԹՅՈՒՆ

Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի գործադիր քարտուղարը իրականացնում է հետևյալ քարտուղարական գործառույթները՝

- ա) իրավիքում եւ նախապատրաստում է Կողմերի ժողովները,
- բ) հանձնում է Կողմերին հաշվետվություններ եւ այլ տեղեկություն, որոնք ստացվել են սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, եւ
- գ) իրականացնում է այնպիսի գործառույթներ, որոնք կարող են սահմանվել Կողմերի կողմից:

## ՅՈՒՐԱԿՐԱՆՆԵՐԸ 13. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ

Սույն Կոնվենցիայի հավելվածները դրա անբաժանելի մասն են հանդիսանում:

## ՅՈՒՐԱԿՐԱՆՆԵՐԸ 14. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կողմերից յուրաքանչյուրը կարող է առաջարկել սույն Կոնվենցիայի իր փոփոխությունները:

2. Սույն Կոնվենցիայի ցանկացած առաջարկվող փոփոխության տեքստ գրավոր ներկայացվում է Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի գործադիր քարտուղարին, որն այն ուղարկում է բոլոր Կողմերին առնվազն 90 օր առաջ Կողմերի այն ժողովից, որտեղ առաջարկվում է ընդունել այդ փոփոխությունը:

3. Կողմերը գործադրում են բոլոր ջանքերը սույն Կոնվենցիայի ցանկացած փոփոխության առիթով համաձայնության գալու համար միաձայնության միջոցով: Եթե միաձայնության հասնելու բոլոր միջոցները սպառված են, իսկ համաձայնությունը չի կայացել, ապա որպես վերջին միջոց փոփոխությունը ընդունվում է ժողովին ներկա եւ քվեարկող Կողմերի ձայների երեք չորրորդի մեծամասնությամբ:

4. Ավանդապահը հաղորդում է ի գիտություն բոլոր Կողմերին Կոնվենցիայի փոփոխությունները վավերացման, հաստատման կամ ընդունման համար, որոնք ընդունվել են վերը նշված կետ 3-ին համապատասխան: Սույն Կոնվենցիայի փոփոխությունները, հավելվածների հետ միասին, ուժի մեջ են մտնում այն Կողմերի համար, որոնք դրանք վավերացրել, հաստատել կամ ընդունել են Ավանդապահի կողմից Կողմերի առնվազն երեք չորրորդի վավերացման, հաստատման կամ ընդունման փաստաթղթի ստացման օրից 90 օր հետո: Դրանից հետո որեւէ այլ Կողմի համար փոփոխություններն ուժի մեջ կմտնեն դրա վավերացման, հաստատման կամ ընդունման մասին փաստաթուղթն ի պահ տալուց հետո 90-րդ օրը:

5. Ցանկացած Կողմ, որը չի կարող հաստատել սույն Կոնվենցիայի հավելվածի որեւէ փոփոխություն, գրավոր տեղեկացնում է այդ մասին Ավանդապահին հավելվածի ընդունման մասին ծանուցում ստանալու օրվանից հետո տասներկու ամսվա ընթացքում: Ավանդապահը անհապաղ հաղորդում է բոլոր Կողմերին ցանկացած այդպիսի ծանուցման ստացման մասին: Ցանկացած Կողմ կարող է ցանկացած ժամանակ ընդունել փոփոխություններ՝ իրաժարվելով իր նախկին հայտարարությունից, եւ երբ Ավանդապահին հանձնվում են այդ հավելվածի փոփոխության ընդունման փաստաթղթերը,

դրանք ուժի մեջ են մտնում այդ Կողմի համար:

6. Ավանդապահի կողմից հաղորդման ստացման օրից տասներկու ամիս հետո, ինչպես այդ նախատեսված է վերը բերված կետ 4-ով, հավելվածի փոփոխությունը ուժի մեջ է մտնում այն Կողմերի համար, որոնք Ավանդապահին ծանուցում չեն ներկայացրել, վերը նշված կետ 5-ի դրույթներին համապատասխան, պայմանով, որ ոչ ավել, քան Կողմերի մեկ երրորդը ներկայացրել է այդպիսի ծանուցում:

7. Սույն հոդվածի նպատակների համար, "քվեարկությանը ներկա եւ դրան մասնակցած Կողմերը" այն Կողմերն են, որոնք ներկա են եւ քվեարկում են "կողմ" կամ "դեմ":

#### ՀՈԴՎԱԾ 15. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՏՈՒԳՈՒՄԸ

Կողմերի ժողովը որոշում է, միաձայնության սկզբունքի հիման վրա ոչ հակամարտական, ոչ դատական եւ խորհրդակցական բնույթի լրացուցիչ միջոցները՝ սույն Կոնվենցիայի դրույթների իրականացման ստուգման համար: Այս միջոցները ապահովում են հասարակության պատշաճ մասնակցությունը եւ կարող են ներառել հասարակության ներկայացուցիչների հաղորդումների քննարկումը այն հարցերով, որոնք առնչվում են սույն Կոնվենցիային:

#### ՀՈԴՎԱԾ 16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

1. Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման առիթով երկու կամ ավելի Կողմերի միջև վեճ առաջանալու դեպքում նրանք ձգտում են լուծում գտնել բանակցությունների կամ վեճերի լուծման որեւէ այլ ձեւով, որն ընդունելի է վեճին մասնակից կողմերի համար:

2. Սույն Կոնվենցիայի ստորագրման, վավերացման, ընդունման, հաստատման համար կամ նրան միանալու ժամանակ կամ այնուհետեւ ցանկացած այլ ժամանակ Կողմը կարող է ավանդապահին գրավոր դիմում ուղարկել այն վեճի կապակցությամբ, որը չի լուծվել վերը նշված կետ 1-ի դրույթներին համապատասխան, նա ընդունում է վեճի լուծման հետեւյալ մեկ կամ երկու միջոցը, որպես պարտադիր ցանկացած կողմի համար, որը ստանձնում է այդպիսի պարտավորություն՝

ա) վեճի հանձնումը Միջազգային դատարան,

բ) արբիտրաժ՝ հավելված 2-ում բերված ընթացակարգին համապատասխան:

3. Եթե վեճի կողմերը ընդունել են վերը նշված կետ 2-ում հիշատակված վեճի կարգավորման երկու միջոցներն էլ, ապա վեճը կարող է հանձնվել միայն Միջազգային դատարան, եթե կողմերը այլ բան չեն պայմանավորվել:

#### ՀՈԴՎԱԾ 17. ԱՏՈՐԱԳՐՈՒՄԸ

Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար Օրիոսում (Դանիա) 1998 թվականի հունիսի 25-ից, այնուհետեւ՝ Միավորված ազգերի կազմակերպության նստավայրում՝ Նյու Յորքում, մինչեւ 1998 թվականի դեկտեմբերի 21-ը Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի անդամ պետությունների համար, ինչպես նաեւ այն պետությունների համար, որոնք ունեն Եվրոպայի տնտեսական հանձնաժողովին առընթեր խորհրդակցական կարգավիճակ ըստ Տնտեսական եւ սոցիալական խորհրդի 1947 թվականի մարտի 28-ի թիվ 36 (VI) որոշման կետեր 8-ի եւ 11-ի եւ տնտեսական համագործակցության տարածաշրջանային կազմակերպությունների համար, որոնք ստեղծվել են Եվրոպայի տնտեսական խորհրդի անդամ ինքնիշխան պետությունների կողմից, որոնք իրենց անդամ պետությունները փոխանցել են իրավասություններ այն հարցերի կապակցությամբ, որոնք կարգավորվում են սույն Կոնվենցիայով, ներառյալ իրավասությունը՝ կնքել պայմանագրեր, որոնք առնչվում են տվյալ հարցերին:

## ՅՈՒՐԱԿԱՆ 18. ԱՎԱՆԴԱՊԱՅԸ

Որպես սույն Կոնվենցիայի Ավանդապահ հանդես է գալիս Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը:

## ՅՈՒՐԱԿԱՆ 19. ՎԱՎԵՐԱՑՈՒՄԸ, ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՄԻԱՑՈՒՄԸ

1. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման այն ստորագրած պետությունների եւ տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների կողմից:

2. Սույն Կոնվենցիան 1998 թվականի դեկտեմբերի 22-ից բաց է այն պետությունների եւ տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների ստորագրման համար, որոնք նշված են հոդված 17-ում:

3. Ցանկացած այլ պետություն, որը նշված չէ վերը բերված կետ 2-ում, որը հանդիսանում է Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետություն, կարող է միանալ Կոնվենցիային Կողմերի ժողովի համաձայնությամբ:

4. Հոդված 17-ում հիշատակված ցանկացած կազմակերպություն, որը դառնում է սույն Կոնվենցիայի Կողմ, այն դեպքում, երբ այդ կազմակերպության անդամ պետություններից ոչ մեկը սույն Կոնվենցիայի Կողմ չէ, կապված է սույն Կոնվենցիայով նախատեսված բոլոր պարտավորություններով: Այն դեպքում, երբ այդպիսի կազմակերպությունների անդամ պետություններից մեկը կամ մի քանիսը սույն Կոնվենցիայի Կողմ են, ապա տվյալ կազմակերպությունը եւ նրա անդամ պետությունները որոշում են ընդունում իրենց համապատասխան պատասխանատվության մասին՝ սույն Կոնվենցիայից բխող իրենց պարտականությունների իրագործման համար: Այդ դեպքերում տվյալ կազմակերպությունը եւ նրա անդամ պետությունները չեն կարող միաժամանակ օգտվել այն իրավունքներից, որոնք նախատեսված են սույն Կոնվենցիայով:

5. Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունները, որոնք հիշատակվում են հոդված 17-ում, իրենց վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման փաստաթղթերում հայտարարում են իրենց իրավասության սահմանների մասին՝ այն հարցերում, որոնք կարգավորվում են սույն Կոնվենցիայով: Այս կազմակերպությունները նմանապես տեղեկացնում են Ավանդապահին իրենց իրավասությունների շրջանակների բոլոր էական փոփոխությունների մասին:

## ՅՈՒՐԱԿԱՆ 20. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին 16-րդ փաստաթղթի ի պահ տալուց հետո 90-րդ օրը:

2. Վերը նշված կետ 1-ի նպատակների համար ցանկացած փաստաթուղթ, որը ի պահ է տրվել տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային որեւէ կազմակերպության կողմից, չի դիտարկվում որպես հավելյալ այն փաստաթղթերի նկատմամբ, որոնք ի պահ են տրվել այդ կազմակերպության անդամ պետությունների կողմից:

3. Հոդված 17-ում նշված յուրաքանչյուր պետության կամ յուրաքանչյուր կազմակերպության համար, որոնք վավերացնում, ընդունում կամ հաստատում են սույն Կոնվենցիան, կամ միանում են դրան վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին 16-րդ փաստաթուղթը ի պահ տալուց հետո, սույն Կոնվենցիան մտնում է ուժի մեջ 90-րդ օրը այն բանից հետո, երբ այդպիսի պետությունը կամ կազմակերպությունը ի պահ է տվել վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին փաստաթուղթը:



## ՀՈՂՎԱԾ 21. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻՑ ԴՈՒՐՍ ՉԱԼԸ

Որքան Կողմի նկատմամբ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից երեք տարի անցնելուց հետո ցանկացած պահի այդ Կողմը կարող է դուրս գալ սույն Կոնվենցիայից՝ Ավանդապահին գրավոր ծանուցում ուղղելով: Ցանկացած այդպիսի ելք ուժի մեջ է մտնում դուրս գալու ծանուցումը Ավանդապահի ստանալուց հետո 90-րդ օրը:

## ՀՈՂՎԱԾ 22. ՏԵԶՍԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՌՈՒԹՅՈՒՆԸ

Սույն Կոնվենցիայի բնօրինակը, որի անգլերեն, ռուսերեն եւ ֆրանսերեն տեքստերը հավասար ուժ ունեն, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Ի հաստատումն որի ներքոստորագրյալները, պատշաճ ձեւով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Օրիուում (Դանիա) հազար ինը հարյուր ինսուսուութ թվականի հունիսի քսանհինգին:

### Հավելված 1

#### 6-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ Ա) ԵՆԹԱԿԵՏՈՒՄ ՆԵՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

##### 1. Էներգետիկա

- նավթամշակման եւ գազամշակման գործարաններ,
- գազաֆիկացիայի եւ գազի հեղուկացման կայանքներ,
- ջերմային էլեկտրակայաններ եւ այլ այրման համար նախատեսված կայանքներ 50 մեգավատտ (մվտ) կամ ավելի ջերմային հզորությամբ,
- կոքսային վառարաններ,
- ատոմային էլեկտրակայաններ եւ այլ ատոմային ռեակտորներ, ներառյալ այդպիսի էլեկտրակայանների կամ ռեակտորների ապամոնտաժումը կամ շահագործումից հանումը 1/ (բացառությամբ տրոհվող եւ վերականգնվող նյութերի արտադրության եւ փոխակերպման համար նախատեսված գիտահետազոտական կայանքների, որոնց առավելագույն հզորությունը չի գերազանցում 1 կվտ մշտական ջերմային հզորությունը),
- ճառագայթահար միջուկային վառելիքի վերամշակման կայանքներ,
- կայանքներ, որոնք նախագծված են՝
- միջուկային վառելիքի արտադրության կամ հարստացման համար,
- ճառագայթահարված միջուկային վառելիքի կամ բարձր ռադիոակտիվություն ունեցող թափոնների վերամշակման համար,
- ճառագայթահարված միջուկային վառելիքի վերջնական հեռացման համար,
- բացառապես ռադիոակտիվ թափոնների վերջնական հեռացման համար,
- բացառապես ճառագայթահարված միջուկային վառելիքի կամ ռադիոակտիվ թափոնների պահպանման համար (ծրագրավորված ավելի քան տասը տարվա համար) արտադրական օբյեկտի տարածքից դուրս այլ վայրերում:

##### 2. Մետաղների արտադրություն եւ վերամշակում

- մետաղական հանքանյութերի (ներառյալ սուլֆիդային հանքանյութերի) թրծման եւ ագլոմերացիայի կայանքներ,
- կայանքներ՝ վերամշակված թուջի կամ պողպատի արտադրության համար (առաջնային կամ երկրորդային ձևում), ներառյալ անընդհատ հոսքով ձուլումը, որոնք գերազանցում են ժամում 2,5 տոննա հզորությունը,
- սեւ մետաղների վերամշակման կայանքներ,
- i) տաք գլոցանման գործարաններ, որոնց հզորությունը գերազանցում է ժամում

20 տոննա անմշակ պողպատ հզորությունը,

ii) դարբնոցներ, որոնց էներգիան գերազանցում է 50 կիլոջոուլ հզորությունը մեկ մուրճի հաշվով, իսկ սպառվող ջերմային հզորությունը գերազանցում է 20 մվտ մեծությունը,

iii) պաշտպանիչ մետաղական ծածկույթների փչում անմշակ պողպատի մատուցմամբ, որի քանակը գերազանցում է ժամում 2 տոննա մեծությունը,

iv) սեւ մետաղների ձուլարաններ՝ օրական 20 տոննայից ավելի արտադրական հզորությամբ,

- կայանքներ, որոնք նախատեսված են՝

i) հանքանյութից, խտանյութից կամ երկրորդային հումքային նյութերից անմշակ գունավոր մետաղների արտադրության համար՝ մետալուրգիական, քիմիական կամ էլեկտրոլիտիկ պրոցեսների օգտագործմամբ,

ii) գունավոր մետաղների ձուլամշակում, ներառյալ լեգիրացում, ներառյալ արտադրատեսակների ռեկուպերացիա (գտում, ձուլածագործական արտադրություն եւ այլն) ձուլման հզորությամբ, որը գերազանցում է օրական 4 տոննան կապարի եւ կադմիումի համար կամ 20 տոննա մեծությունը այլ մետաղների համար,

- կայանքներ՝ մետաղների եւ պլաստմասսաների մակերեսային մշակման համար՝ էլեկտրոլիտիկ կամ քիմիական պրոցեսների օգտագործմամբ, երբ վերամշակման համար օգտագործվող անոթների ծավալը գերազանցում է 30 խորանարդ մետրը:

3. Հանքային հումքի վերամշակման արդյունաբերություն

- պտտվող թրծման վառարաններում ցեմենտի կլինկերի արտադրության համար նախատեսված կայանքներ, որոնց արտադրական հզորությունը գերազանցում է օրական 500 տոննան, կամ պտտվող թրծման վառարաններում կրի արտադրության համար նախատեսված կայանքներ, որոնց օրական արտադրական հզորությունը գերազանցում է 50 տոննա մեծությունը, կամ այլ վառարաններում, որոնց օրական արտադրողականությունը գերազանցում է 50 տոննան,

- ասբեստի արտադրության եւ ասբեստ պարունակող նյութերի պատրաստման համար նախատեսված կայանքներ,

- ապակու, ներառյալ ապակեթելի արտադրության համար նախատեսված կայանքներ, որոնց ձուլման արտադրության հզորությունը գերազանցում է օրական 20 տոննան,

- հանքային նյութերի հալեցման համար նախատեսված կայանքներ, ներառյալ հանքային մանրաթելի արտադրությունը, որի ձուլման արտադրության հզորությունը գերազանցում է օրական 20 տոննան,

- թրծման միջոցով կերամիկական արտադրատեսակների արտադրության համար նախատեսված կայանքներ, մասնավորապես՝ տանիքի կղմինդրի, աղյուսի, հրակայուն աղյուսի, կերամիկական սալիկի, քարե կերամիկայի կամ ճենապակե իրերի արտադրության համար, որի արտադրական հզորությունը գերազանցում է օրական 75 տոննա մեծությունը եւ/կամ 4 խորանարդ մետր հզորությունը գերազանցող թրծման վառարաններ, որոնց շարման խտությունը գերազանցում է 300 կգ/մ խորանարդ մեծությունը:

4. Քիմիական արդյունաբերություն. սույն կետում բերված դասակարգերի սահմաններում արտադրությունը նշանակում է արդյունաբերական մասշտաբներով արտադրություն՝ ա)-է) ենթակետերում բերված նյութերի կամ նյութերի խմբերի քիմիական վերամշակման միջոցով:

ա) քիմիական կայանքներ, որոնք նախատեսված են հիմնական օրգանական քիմիական նյութերի արտադրության համար, որպիսիք են՝

i) պարզ ածխաջրածիններ (գծային կամ ցիկլիկ, հագեցված կամ չհագեցված, ալիֆատիկ կամ արոմատիկ),

ii) թթվածին պարունակող ածխաջրածիններ, որպիսիք են՝ սպիրտները, ալդեհիդները, կետոնները, կարբոնային թթուները, բարդ եթերները, ացետատները, պարզ եթերները, պերօքսիդները, էպօքսիդային խեժերը,

iii) ծծմբային ածխաջրածինները,  
iv) ազոտական ածխաջրածինները, որպիսիք են՝ ամինները, ամիդները, ազոտական միացությունները, նիտրոմիացությունները կամ նիտրատներ, նիտրիլներ, ցիանատներ, իզոցիանատներ,

v) ֆոսֆոր պարունակող ածխաջրածիններ,

vi) հալոգենացված ածխաջրածիններ,

vii) օրգանոմետաղական միացություններ,

viii) հիմնական պլաստմասսաներ (պոլիմերներ, սինթետիկ մանրաթելեր եւ մանրաթելեր ցեյուլոզայի հիման վրա),

ix) սինթետիկ կաուչուկ,

x) ներկեր եւ պիգմենտներ,

xi) մակերեսային ակտիվ նյութեր եւ մակերեսագոյացուցիչներ,

բ) հիմնական անօրգանական նյութերի արտադրության համար նախատեսված կայանքներ, որպիսիք են՝

i) գազային նյութեր, որպիսիք են՝ ամոնիակը, քլորը կամ քլորաջրածինը, ֆտորը կամ ֆտորաջրածինը, ածխածնի օքսիդները, ծծմբի միացությունները, ազոտի օքսիդները, ջրածինը, ծծմբի երկօքսիդը, ածխածնի քլորօքսիդը,

ii) թթուներ, որպիսիք են՝ քրոմային թթուն, ֆտորաջրածնական թթուն, ֆոսֆորական թթուն, ազոտական թթուն, քլորաջրածնական թթուն, ծծմբական թթուն, օլեուլը, ծծմբային թթուն,

iii) հիմքերը, որպիսիք են՝ ամոնիումի հիդրօքսիդը, կալիումի հիդրօքսիդը, նատրիումի հիդրօքսիդը,

iv) աղերը, որպիսիք են՝ ամոնիումի քլորիդը, կալիումի քլորօքսիդը, կալիումի կարբոնատը, նատրիումի կարբոնատը, պերբորատը, արծաթի նիտրատը,

v) ոչ մետաղները, մետաղների օքսիդները եւ այլ անօրգանական միացությունները, որոնք են՝ կալցիումի կարբիդը, սիլիցիումը, սիլիցիումի կարբիդը,

գ) ֆոսֆորային, ազոտական կամ կալիումական հիմքով պարարտանյութերի (պարզ կամ բարդ պարարտանյութերի) արտադրության համար նախատեսված քիմիական արդյունաբերական կայանքներ,

դ) քիմիական արդյունաբերական կայանքներ բուսաբուծության համար նախատեսված նյութերի եւ բիոցիդների արտադրության համար,

ե) կայանքներ, որտեղ օգտագործվում են քիմիական կամ կենսաբանական պրոցեսներ հիմնական դեղագործական արտադրատեսակների արտադրության համար,

զ) պայթուցիկ նյութերի արտադրության համար նախատեսված քիմիական կայանքներ,

է) քիմիական արտադրության կայանքներ, որտեղ քիմիական կամ կենսաբանական գործընթացները օգտագործվում են կերերի սպիտակուցային հավելուկների, ֆերմենտների եւ այլ սպիտակուցային նյութերի արտադրության համար:

5. Թափոնների մշակում եւ հեռացում

- վտանգավոր թափոնների այրման, ռեկուպերացիայի, քիմիական մշակման կամ թաղման համար նախատեսված կայանքներ,

- կոմունալ-կենցաղային թափոնների այրման համար նախատեսված կայանքներ՝ ժամում 3 տոննան գերազանցող հզորությամբ,

- ոչ վտանգավոր թափոնների հեռացման համար նախատեսված կայանքներ՝ օրական 50 տոննան գերազանցող հզորությամբ,

- աղբանոցներ, որտեղ թափվում է օրական ավելի քան 10 տոննա աղբ, կամ ընդհանուր ծավալով, որը գերազանցում է 25 000 տոննան, բացառությամբ չեզոք թափոնների համար նախատեսված աղբանոցների,

6. Կեղտաջրերի մաքրման համար նախատեսված կայանքներ՝ որոնց հզորությունը գերազանցում է 150 000 մարդ բնակչությանը համարժեք մեծությունը:

7. Արդյունաբերական կայանքներ հետեւյալ նպատակների համար՝

ա) փայտանյութից ցելյուլոզի կամ նման մանրաթելային նյութերի արտադրության համար,

բ) թղթի եւ ստվարաթղթի արտադրություն, որի օրական հզորությունը գերազանցում է 20 տոննան:

8. ա) Յեռավոր հաղորդակցության երկաթուղային գծերի եւ օդանավակայանների կառուցում, 2/ որոնց հիմնական թռիչքային ուղու երկարությունը հավասար է կամ գերազանցում է 2 100 մետրը,

բ) ավտոմայրուղիների եւ արագընթաց ճանապարհների կառուցում 3/,

գ) նոր ճանապարհների կառուցում, որոնք ունեն երթեւեկության չորս կամ ավելի շարքեր կամ երթեւեկության երկու կամ պակաս շարքեր ունեցող ճանապարհների վերակառուցում եւ/կամ լայնացում՝ դրանք չորս կամ ավելի շարքեր ունեցող ճանապարհների վերածելու նպատակով, այնտեղ, որտեղ այդպիսի նոր ճանապարհը կամ վերակառուցվող եւ/կամ լայնացվող հատվածը ունենալու է 10 կմ կամ ավելի անընդհատ երկարություն:

-----  
ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասում

#### ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՆ ԶԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
(2-րդ մաս)

9. ա) Ներքին ջրային ուղիներ եւ նավահանգիստներ ներքին նավագնացության համար, որոնք թույլ են տալիս ավելի քան 1 350 տոննա տարողություն ունեցող նավերի անցումը,

բ) առեւտրական նավահանգիստներ, բեռնաթափման եւ բեռնամբարձման նավամատույցներ, որոնք կապված են ափամերձ եւ դուրս բերված նավահանգիստների հետ (բացառությամբ լաստանավերի նավամատույցները), որոնք կարող են ընդունել ավելի քան 1 350 տոննա տարողություն ունեցող նավեր:

10. Ստորգետնյա ջրերի վերցման կամ արհեստական ստորգետնյա ջրերի արհեստական համալրման համակարգեր, որոնց վերցման կամ համալրման տարեկան ծավալը համարժեք է կամ գերազանցում է 10 մլն խորանարդ մետրը,

11. ա) Ջրային ավազանների միջեւ ջրի հոսքի տեղափոխման աշխատանքներ, երբ այդպիսի տեղափոխումը ուղղված է ջրի հնարավոր պակասը կանխելու, եւ տեղափոխվող ջրի տարեկան ծավալը գերազանցում է 100 մլն խորանարդ մետրը,

բ) գետերի ավազանների միջեւ ջրային ռեսուրսների տեղափոխման հետ կապված բոլոր այլ տեսակի աշխատանքների դեպքում, երբ ջրի վերցման միջին բազմամյա հոսքը գերազանցում է տարեկան 2 000 միլիոն խ/մ-ը, երբ տեղափոխվող ջրի ծավալը գերազանցում է այդ հոսքի 5%-ը:

Այս երկու դեպքերում էլ բացառվում է խմելու ջրի հոսքի տեղափոխումը:

12. Նավթի եւ բնական գազի արդյունահանում առեւտրային նպատակներով, երբ արդյունահանման քանակը գերազանցում է օրական 500 տոննան նավթի դեպքում եւ օրական 500 000 խորանարդ մետրը՝ գազի դեպքում:

13. Ամբարտակներ եւ այլ կառույցներ, որոնք նախատեսված են ջուրը հետ մղելու կամ ջրի մշտական պահեստավորման համար, որոնց համար ջրի հետ մղված կամ հավելյալ ամբարված քանակությունը գերազանցում է 10 մլն մ/խ -ը:

14. Գազի, նավթի կամ քիմիական նյութերի տեղափոխման համար 800 մմ-ից ավելի

տրամագծով եւ 40 կմ-ից ավելի երկարությամբ խողովակաշարեր:

15. Կայանքներ՝ թռչունների կամ խոզերի ինտենսիվ բուծման համար, որոնք նախատեսված են ավելի, քան՝

ա) 40 000 տեղ թռչունի համար,

բ) 2 000 տեղ խոզերի բուծման համար (30 կգ-ից ավելի քաշով), կամ

գ) 750 տեղ մայր խոզերի համար:

16. Քարհանքերի եւ օգտակար հանածոների բաց եղանակով արդյունահանում, երբ տեղամասի մակերեսը գերազանցում է 25 հեկտարը, կամ տորֆի արդյունահանում, երբ տեղամասի մակերեսը գերազանցում է 150 հեկտարը:

17. Էլեկտրահաղորդման օդային գծերի կառուցում 220 կվ կամ ավելի բարձր լարվածությամբ եւ ավելի քան 15 կմ երկարությամբ:

18. Կայանքներ՝ նավթի, նավթաքիմիական նյութերի կամ քիմիական նյութերի պահեստավորման համար՝ 200 000 տոննա կամ ավելի տարողությամբ:

19. Գործունեության այլ տեսակներ՝

- կայանքներ՝ մանրաթելի կամ տեքստիլի նախնական վերամշակման (այնպիսի գործողություններ, ինչպիսիք են լվացումը, սպիտակեցումը, մերսերիզացիան) կամ ներկման համար, որտեղ մշակվող նյութերի ծավալը գերազանցում է օրական 10 տոննան:

- կայանքներ՝ մորթիների եւ կաշվի դաբաղման համար, որոնց համար արտադրատեսակների ծավալը գերազանցում է օրական 12 տոննան,

ա) սպանդանոցներ, որոնց մշակման հզորությունը գերազանցում է օրական 50 տոննա մսեղիքը,

բ) մշակում եւ վերամշակում սննդամթերքներ ստանալու համար հետեւյալ նյութերից՝

i) կենդանական հումքից (բացի կաթից), որոնց պատրաստի արտադրանք արտադրելու հզորությունը գերազանցում է օրական 75 տոննան,

ii) բուսական հումքից, որոնց պատրաստի արտադրանք արտադրելու հզորությունը գերազանցում է օրական 300 տոննան (եռամսյակային միջին ցուցանիշ),

գ) կաթի մշակում եւ վերամշակում, երբ ստացվող կաթի քանակությունը գերազանցում է օրական 200 տոննան (տարեկան միջին ցուցանիշ),

- կայանքներ՝ ընտանի կենդանիների մսեղիքի կամ անասնաբուծության թափոնների հեռացման կամ վերամշակման համար, որոնց օրական հզորությունը գերազանցում է 10 տոննան,

- նյութերի, առարկաների կամ արտադրատեսակների մակերեսային մշակման համար նախատեսված կայանքներ՝ օրգանական լուծիչների օգտագործմամբ, մասնավորապես, կայանքներ՝ հարդարման, տպագրման, ծածկույթի, յուղազրկման, ջրամեկուսացման, ստանդարտացման, ներկման, մաքրման կամ ներծծման համար, որոնց օրական հզորությունը գերազանցում է 150 կգ-ը մեկ ժամում կամ տարեկան՝ 200 տոննան,

- կայանքներ՝ ածխածնի (բնական կոքսի) կամ էլեկտրագրաֆիտի արտադրության համար՝ այրման կամ գրաֆիտիզացիայի միջոցով:

20. Ցանկացած տեսակի գործունեություն, որն ընդգրկված չէ վերը բերված 1-19 կետերում, այն դեպքերում, երբ հասարակության մասնակցությունը նախատեսվում է շրջակա միջավայրի վրա թողած ազդեցության գնահատման ընթացակարգի սահմաններում՝ ազգային օրենսդրությանը համապատասխան:

21. Սույն Կոնվենցիայի հոդված 6-ի 1 ա) կետի դրույթները չեն կիրառվում վերոհիշյալ որեւէ ծրագրի նկատմամբ, որը իրականացվում է բացառապես կամ հիմնականում հետազոտությունների, նոր մեթոդների կամ արտադրատեսակների մշակումների եւ ստուգման համար՝ երկու տարվանից պակաս ժամկետով, եթե միայն գոյություն չունի շրջակա միջավայրի կամ առողջության համար էական վտանգի հավանականություն:

22. Գործունեության ցանկացած փոփոխություն կամ ընդլայնում, որը ինքնին

համապատասխանում է սույն հավելվածում սահմանված չափանիշներին /սահմանային մեծություններին, որոնք սահմանված են սույն հավելվածի մեջ, ընկնում է սույն Կոնվենցիայի հոդված 6-ի 1 ա) կետի տակ: Գործունեության ցանկացած այլ փոփոխություն կամ ընդլայնում ընկնում է սույն Կոնվենցիայի հոդված 6-ի 1 բ) կետի տակ:

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ատոմային էլեկտրակայանները եւ այլ ատոմային ռեակտորները դադարում են լինել այդպիսիք, երբ միջուկային վառելիքը եւ ռադիոակտիվությամբ աղտոտված տարրերը վերջնականապես հեռացված են կայանքի արդյունաբերական տարածքից:

2. Սույն Կոնվենցիայի նպատակների համար "օդանավակայան" նշանակում է՝ օդանավակայան, որը համապատասխանում է Չիկագոյի 1944 թվականի Կոնվենցիայի սահմանմանը, որով հիմնադրվել է Զաղաքացիական օդանավագնացության միջազգային կազմակերպությունը (Յավելված 14):

3. Սույն Կոնվենցիայի նպատակների համար "արագընթաց ճանապարհ" նշանակում է՝ ճանապարհ, որը համապատասխանում է 1975 թվականի Նոյեմբերի 15-ի Ավտոմոբիլային ճանապարհների մասին Եվրոպական համաձայնագրում տրված սահմանմանը:

## Յավելված 2

### ԱՐՔԻՏՐԱԺ

1. Այն դեպքում, երբ վեճը փոխանցվում է արբիտրաժային քննության՝ սույն Կոնվենցիայի հոդված 16-ի 2-րդ կետի համաձայն, կողմը կամ կողմերը ծանուցում են քարտուղարությանը արբիտրաժային քննության առարկայի մասին եւ նշում, մասնավորապես, սույն Կոնվենցիայի հոդվածները, որոնց մեկնաբանության կամ կիրառման հարցով առաջացել է վեճը: Քարտուղարությունը ուղարկում է ստացված ծանուցումը սույն Կոնվենցիայի բոլոր Կողմերին:

2. Արբիտրաժային դատարանը կազմվում է երեք անդամից: Վեճին մասնակցող ինչպես կողմ-հայցվորը կամ կողմեր-հայցվորները, այնպես էլ այլ կողմերը նշանակում են մեկական արբիտր եւ այս ձեւով ընտրված երկու արբիտրներ փոխադարձ համաձայնությամբ նշանակում են երրորդ արբիտրին, որը ստանձնում է արբիտրաժային դատարանի նախագահի դերը: Վերջինս չի կարող լինել վեճի կողմերից որեւէ մեկի քաղաքացի եւ չի կարող մշտական բնակության վայր ունենալ կողմերից որեւէ մեկի տարածքում, չի կարող գտնվել դրանց ծառայության մեջ կամ գործի հետ որեւէ այլ կերպ առնչություն ունենալ:

3. Եթե երկրորդ արբիտրի նշանակումից հետո երկու ամսվա ընթացքում արբիտրաժային դատարանի նախագահը նշանակված չէ, ապա ցանկացած կողմի խնդրանքով Եվրոպայի տնտեսական խորհրդի գործադիր քարտուղարը նախագահ նշանակում է հաջորդ երկու ամիսների ընթացքում:

4. Եթե վեճի կողմերից մեկը չի նշանակում մյուս արբիտրին խնդրանքը ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում, ապա մյուս կողմը կարող է տեղեկացնել այդ մասին Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի գործադիր քարտուղարին, որը նշանակում է արբիտրաժային դատարանի նախագահին հաջորդ երկու ամսվա ընթացքում: Իր նշանակումից հետո արբիտրաժային դատարանի նախագահը խնդրում է այն կողմին, որը դեռ չի նշանակել արբիտրին, կատարել այդ երկու ամսվա ընթացքում: Եթե վերջինս դա չի անում հիշյալ ժամանակահատվածի ընթացքում, ապա նախագահը տեղեկացնում է Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի գործադիր քարտուղարին, որն այդ արբիտրին նշանակում է հաջորդ երկու ամսվա ընթացքում:

5. Արբիտրաժային դատարանը կայացնում է իր որոշումը միջազգային իրավունքի

Եւ սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

6. Ցանկացած արբիտրաժային դատարան, որը հիմնադրվում է սույն հավելվածի դրույթներին համապատասխան, մշակում է ընթացակարգի սեփական կանոնները:

7. Արբիտրաժային դատարանի որոշումները եւ՝ ընթացակարգային, եւ՝ նյութական հարցերով ընդունվում են նրա անդամների ձայների մեծամասնությամբ:

8. Դատարանը կարող է ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները փաստերի բացահայտման համար:

9. Վեճի կողմերը աջակցություն են ցուցաբերում արբիտրաժային դատարանի աշխատանքին եւ, մասնավորապես, օգտագործելով իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցները.

ա) տրամադրում են նրան բոլոր համապատասխան փաստաթղթերը, պայմանները, տեղեկությունը,

բ) անհրաժեշտության դեպքում նրան հնարավորություն են ընձեռում կանչել վկաներին կամ փորձագետներին եւ լսել նրանց ցուցմունքները:

10. Վեճի կողմերը եւ արբիտրաժային դատարանի անդամները պահպանում են ցանկացած այն տեղեկության գաղտնիությունը, որը ստացվում է նրանց՝ գործը արբիտրաժային դատարանում քննելու ընթացքում:

11. Արբիտրաժային դատարանը կարող է, կողմերից մեկի խնդրանքով, իրականացնել պաշտպանության ժամանակավոր միջոցներ:

12. Եթե կողմերից մեկը չի ներկայանում արբիտրաժային դատարան կամ չի մասնակցում գործի քննությանը, մյուս կողմը կարող է խնդրել դատարանին՝ շարունակել քննությունը եւ ընդունել վերջնական որոշում: Կողմերից մեկի բացակայելը դատարանում կամ կողմերից մեկի չմասնակցելը գործի քննության համար խոչընդոտ չի հանդիսանում:

13. Արբիտրաժային դատարանը կարող է լսել հակընդդեմ հայցերը, որոնք առաջանում են անմիջականորեն վեճի էությունից, եւ որոշում կայացնել դրանց կապակցությամբ:

14. Եթե արբիտրաժային դատարանը այլ որոշում չի կայացնում, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, ապա դատական ծախսերը, ներառյալ դատարանի անդամների վարձատրությունը, բաշխվում են վեճի կողմերի միջեւ հավասար չափով: Դատարանը գրանցում է իր բոլոր ծախսերը եւ վեճի կողմերին վերջնական հաշվետվություն է ներկայացնում է այդ ծախսերի մասին:

15. Սույն Կոնվենցիայի ցանկացած Կողմ, որն ունի իրավական բնույթի շահագրգռվածություն վեճի առարկայի նկատմամբ եւ կարող է տուժել տվյալ գործով կայացված որոշմամբ, կարող է մասնակցել գործի քննությանը՝ դատարանի համաձայնությամբ:

16. Արբիտրաժային դատարանը կայացնում է իր որոշումը իր հիմնադրման օրվանից հինգ ամսվա ընթացքում, եթե անհրաժեշտ չի համարում երկարացնել այս ժամկետը հինգ ամիսը չգերազանցող ժամանակահատվածով:

17. Արբիտրաժային դատարանի որոշումը ուղեկցվում է դրա հիմնավորմամբ: Այդ որոշումը հանդիսանում է վերջնական եւ պարտադիր վեճի բոլոր կողմերի համար: Արբիտրաժային դատարանը ուղարկում է իր որոշումը վեճի կողմերին եւ քարտուղարություն: Քարտուղարությունը ուղարկում է ստացված տեղեկությունը սույն Կոնվենցիայի բոլոր Կողմերին:

18. Ցանկացած վեճ, որը կարող է առաջանալ կողմերի միջեւ դատարանի որոշման մեկնաբանության կամ իրականացման առթիվ, կարող է ցանկացած կողմի կողմից ներկայացվել այն արբիտրաժային դատարան, որը կայացրել է այդ որոշումը կամ, եթե հնարավոր չէ օգտվել վերջինիս ծառայություններից, մեկ այլ դատարան, որն այս նպատակով հիմնվում է սույն կերպ, ինչպես եւ առաջինը:

\* Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2001

թվականի հոկտեմբերի 30-ից: